# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

## «ՀՀ ԷԵԲՊՆ-2017-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09.03.2017թ.
ժամը՝ 11:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

_Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)_
աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդ. Շախկյան:

**Անդամներ՝**

_Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)_
աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Հ. Մելիքյան:
աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան:
_Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)_
աշխատակազմի քարտուղարության գլխավոր մասնագետ՝ Ա.Ջուլհակյան:
աշխատակազմի հաշվապահական հաշվառման առաջատար մասնագետ Ն. Բարսեղյան:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

_Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)_
աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ տոներային քարտրիջ Canon 303 – 32000 ՀՀ դրամ, տոներային քարտրիջ Canon FX 10– 43000 ՀՀ դրամ, տոներային քարտրիջ Samsung MLT-D109 – 26000 ՀՀ դրամ:

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

**«ՀՀ ԷԵԲՊՆ-2017-ՇՀԱՊՁԲ-15/8»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության շենքում, ք. Երևան, կառավար. տուն; մասն. 3 հասցեում, մարտի 09-ին ժամը 11:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| N/N | Մասնակցի անվանումը | Կազմակերպության հասցեն |
|---|---|---|
| 1 | <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ | corp@patron.am |

**3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.**

3.1 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (1-ին և 2-րդ չափաբաժինների համար) բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին .**

4.1 «ՀՀ ԷԵԲՊՆ-2017-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

**1) Պիտանելիության չափորոշիչ՝**

ա) դիմում ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու մասին (Հավելված 1)

բ) հայտարարություն ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (Հավելված 2):

**2) Տեխնիկական չափորոշիչ ՝**

ա) հայտարարություն մասնագիտական փորձառության մասին (Հավելված 3.1)

բ) հայտարարություն տեխնիկական միջոցների մասին (Հավելված 3.2)

գ) հայտարարություն ֆինանսական միջոցների մասին (Հավելված 3.3)

դ) հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին (Հավելված 3.4)

ե) հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ (Հավելված 4.1)

**3) Ֆինանսական չափորոշիչ՝** գնային առաջարկ (Հավելված 4):

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**5. Մասնակիցների առաջարկած գները.**

**Գնային առաջարկներ առանց ԱԱՀ** **ՀՀ դրամ**

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1 | Տոներային քարտրիջ | 118625 |
| 2 | Տոներային քարտրիջ | 50050 |

**Գնային առաջարկներ ներառյալ ԱԱՀ** **ՀՀ դրամ**

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1 | Տոներային քարտրիջ | 142350 |
| 2 | Տոներային քարտրիջ | 60060 |

**6. Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար,

բ) 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ–ին,

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն 3-րդ չափաբաժնի մասով մրցույթը հայտարարել չկայացած,

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը

ա)Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

բ) ծանուցել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

գ) Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության, ինչպես նաև 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

**Հանձնաժողովի նախագահ՝** **Եղ. Շախկյան** ...........................

**Հանձնաժողովի անդամներ՝** **Հ. Մելիքյան** ...........................

Ն. Հակոբյան ............................

Ա. Զուլիակյան ............................

Ն. Բարսեղյան ............................

Քարտուղար՝ Լ. Ադոնց ............................